

– Հիմա հոս գրուցե՛ ինչ որ կ'ուզես, բոլոր ուշս քեզի է,– ըսաւ ժպիտը միշտ շրթունքներուն վրայ:

– Ժպտելու ժամանակ չէ, քոյրիկ:– պատասխանեց Սուրեն ձեռքի թուղթը ցցելով եւ կարդալով նամակին վերջի խօսքերը:

– Եթէ յունաց բանակը Բագրեւանդ կը մտնե՛ կը նշանակէ թէ մեր պաշտպանութեան կը դիմէ. եթէ Թեոդորոս կը շտապէ եւ կանուխ կը վազէ կ'երթայ կը նշանակէ թէ նախջուանայ կողմը մեր պաշտպանութեան կը դիմէ. եւ այս բանիս համար պետք է որ ժպտի՞լն էլ արգիլուի:

– Ահա՛ կանանց ամենէն լաւը,– կրկնեց Սուրեն:– Այդ խօսքերով կարծեցիր թէ ինձ պատասխա՞ն տուիր: Այսպիսի վիճակի մէջ բաւական է ըսել թէ Թեոդորոս գնաց արաբաց դէմ, եւ մենք պետք է ոտքերնիս, ձեռքերնիս արածենք անհոգ, անպիտան, դանդաղ նստինք: Այդ մարդը՝ այդ Թեոդորոս երբ «այդ թուղթը Սուրենի տուէք» կըսէ, այն կ'իմանայ, որ Սուրեն պետք է շարժի, առնու Մամիկոնեանց գաւակը եւ դիմէ հոն, ուր արաբը կ'արշաւի, թումբ լինելու համար այդ տակալի թշնամուոյն դէմ, որուն առաջ ոչ բաւական ամրութիւն կայ եւ ոչ նուիրական բան մը աշխարհիս վրայ:

– Բայց այդ Մամիկոնեանց շառաւիղը դեռ տասնեոթ տարու պատանի մ'է, յոգնած՝ նոր ճամփէ եկեր է, կէս-գիշերն անցած հագիւ անկողին մտեր է, իւր տարիքին մէջ օրէնք չէ, որ այդ կատաղի գազանաս դէմ հոգին եւ մարմինը վտանգի դնէ եւ իւր հօր տան ծուխը մարէ:

– Շատ կ'ուզէի, որ այս խօսքերը Թեոդորոսի անգամ մը գրուցէիր...

– Ի՞նչ գաղտնիք կամ ամօթ կայ այս խօսքերուն մէջ, որ չի կարենայի գրուցել. կարծեմ Վարդ երեկ իրիկուն հօրը հետ մէկտեղ չէր եւ չեմ կարծեր թէ վարը զօրականաց հետ ընթրեց, եւ հայրը բռնի մօրը գրկէն առաւ որդին արաբաց դէմ պատերազմելու կամ թումբ շինելու համար:

Այս խօսքերուն երբ Սուրեն սրտնեղութեամբ բերանը բացաւ պատասխանելու, Բիւրեղ առանց ժամանակ տալու «Ահա՛ կանանց ամենէն լաւը»,– գոչեց ծիծաղելով եւ նոյն րոպէին փոքրիկ ոտնաձայն մը լսելով սենեակին մէջ ետին դարձաւ եւ գեղեցիկ վեց տարեկան աղջիկ մը Սուրենի գիրկը դրաւ. իսկ Սուրեն այդ սիրուն տղեկը գրկին մէջ սղմելով եւ համբոյրներով ծածկելով: